

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

02. 11. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Է. Մացակյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Է. Հախվերդյանը, Գ. Հակոբյանը, Ս. Ղուբաթյանը, Ս. Խալաթյանը, Ն. Սարգսյանը, Հ. Մկրտչյանը, Ա. Սահակյանը -մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ .Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Ա. Չատինյանը - ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օրակարգում՝

1. Անցյալ ժամանակաընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց ՝

1. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝

1-օրյա ժամկետում ներկայացնել համեմատական տեղեկատվություն համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ:

2. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանին՝

ա/Մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Վ. Ասատրյանին, Տ. Բաղդյանին ներկայացնել տեղեկատվություն առաջին վերարտադրության ցորենի՝ ըստ համայնքների բաշխման վերաբերյալ:

/ Ժամկետ 5 օր /

բ/Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից պարարտանյութի և առաջին վերարտադրության ցորենի համար գանձվող գումարները մինչև 10.11.2015 թ. մուծելու ուղղությամբ:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ